ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

23 ապրիլի 2024 թ. N 24-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական՝ 2024 թվականի ապրիլի 23-ի նիստի հետևյալ օրակարգը՝

1.1. Ջերմուկ համայնքի 2023 թվականի հաշվապահական հաշվեկշիռը և համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան*

1.2. Տեղական վճարների գծով արտոնություն սահմանելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան*

1.3. Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 89-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.4. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N 101-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում լրացում կատարելու համար Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին դիմելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.5. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N 100-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.6. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը ուղղակի վաճառքով օտարելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.7. Դրամական օգնություն տրամադրելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնակատար Մ. Մարգարյան*

1.8. Ջերմուկ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Կողմ -7 | Դեմ -2 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|
| ԱՐՍԵՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ | |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՆԱՆ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱԶԱՏ | |
| ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ | | |
| ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԽԻԹԱՐ | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻԿ | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ | | |
| ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ | | |

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. ապրիլի 23
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ապրիլի 2024 թ. N 25-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետին համապատասխան՝ավագանին **ո ր ո շ ու մ   է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի 2023 թվականի հաշվապահական հաշվեկշիռը և համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ -7 | Դեմ -2 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|
| ԱՐՍԵՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ | |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՆԱՆ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱԶԱՏ | |
| ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ | | |
| ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԽԻԹԱՐ | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻԿ | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ | | |
| ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ | | |

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. ապրիլի 23
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ապրիլի 2024 թ. N 26-Ա

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով՝ ավագանին **ո ր ո շ ու մ  է՝**

1. Ջերմուկ համայնքի գյուղական բնակավայրերում համայնքի կողմից ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների, ոռոգման ջրի մատակարարման և համայնքը սպասարկող անասնաբուժական ծառայությունների դիմաց սահմանված տեղական վճարների գծով բոլոր բնակիչների համար սահմանել արտոնություն՝ վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

| Կողմ -8 | Դեմ -1 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|
| ԱՐՍԵՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ | |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՆԱՆ | | |
| ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ | | |
| ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԽԻԹԱՐ | | |
| ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱԶԱՏ | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻԿ | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ | | |
| ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ | | |

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. ապրիլի 23
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ապրիլի 2024 թ. N 27-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 89-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա՝ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի «Ջերմուկ համայնքի ավագանու ֆինանսավարկային և համայնքի սոցիալ-տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածությունը հաստատելու մասին» N 89-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ «Ժիրայր Բաբայանի» բառերը փոխարինել «Աննա Վարդազարյանի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ -8 | Դեմ -1 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|
| ԱՐՍԵՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ | |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՆԱՆ | | |
| ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ | | |
| ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԽԻԹԱՐ | | |
| ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱԶԱՏ | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻԿ | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ | | |
| ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ | | |

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. ապրիլի 23
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2024 թ. N 28-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 101-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով, «Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետին համապատասխան և հաշվի առնելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի ս/թ մարտի 7-ի N 01/08.2/1648-2024 գրությունը՝ ավագանին **ո ր ո շ ո ւ մ  է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Ջերմուկ համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու, Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 24-ի N 15-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 101-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

*1) որոշման Հավելված 2-ում՝*

ա. 8-րդ տողի «Հաստիքային միավորները» սյունակում «4» թիվը փոխարինել «5» թվով, «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակում՝ «1133000» թիվը փոխարինել «1416250» թվով,

բ. «Աշխատակազմ (համայնքային ծառայության պաշտոններ)» և «Ֆինանսատնտեսա-գիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին» հատվածներն ամփոփող «Ընդամենը» տողի «18» թիվը փոխարինել «19» թվով, «4369200» թիվը փոխարինել «4652450» թվով,

գ. 20-րդ տողը հանել, «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ» հատվածն ամփոփող «Ընդամենը» տողի «2» թիվը փոխարինել «1» թվով, «380800» թիվը փոխարինել «119000» թվով,

դ. «Ընդամենը/աշխատակազմ» տողում «5945050» թիվը փոխարինել «5966500» թվով, «8434732» թիվը փոխարինել «8456182» թվով,

2) որոշման Հավելված 1-ում՝

ա. «*Աշխատակազմ՝ 12*» արտահայտության մեջ «12» թիվը փոխարինել «13» թվով

բ. «*Քաղաքացիական աշխատանք կատարողներ-3*» արտահայտության մեջ «3» թիվը փոխարինել «2» թվով:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի փետրվարի 3-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» N 173-Ա հրամանով հաստատված անվանացանկում հետևյալ լրացումը կատարելու համար. անվանացանկի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի երրորդ ենթախումբը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ կետով՝ *«7. աշխատակազմի գլխավոր մասնագետ»*:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարությանը օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից և տարածվում է սույն որոշման 2-րդ կետում նշված անվանացանկում լրացում կատարելու մասին նախարարի հրամանի ընդունման օրվանից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կողմ -7 Դեմ-2 Ձեռնպահ -0

ԱՐՍԵՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՆԱՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՇՈՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2024 թ. ապրիլի 23
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

23 ապրիլի 2024 թ. N 29-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 100-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով՝ ավագանին **ո ր ո շ ու մ  է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Ջերմուկ համայնքի ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 3-Ա և 2023 թվականի ապրիլի 21-ի N 39-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 100-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման հավելվածում՝

1) «ՋԵՐՄՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում՝

ա. 3-րդ տողի «Հաստիքային միավորները» սյունակում «2» թիվը փոխարինել «1,5» թվով, «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակում «238000» թիվը փոխարինել «178500» թվով,

բ. 4-րդ տողի «Հաստիքային միավորները» սյունակում «5,5» թիվը փոխարինել «6» թվով, «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակում «715000» թիվը փոխարինել «780000» թվով,

գ. «Ընդամենը» տողի «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակում «2630420» թիվը փոխարինել «2635925» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հոջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ -7 | Դեմ -2 | Ձեռնպահ -0 |
| ԱՐՍԵՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ | |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՆԱՆ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱԶԱՏ | |
| ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ | | |

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. ապրիլի 23
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

23 ապրիլի 2024 թ. N 30-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով «Պիվիէմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2024 թվականի ապրիլի 12-ի թիվ «24/005-ԳՆ» գնահատման հաշվետվությունը, որով անշարժ գույքը գնահատվել է 2330000 (երկու միլիոն երեք հարյուր երեսուն հազար) դրամ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Գագիկ Արտուշի Գրիգորյանը երկար տարիներ տնօրինում ու տիրապետում է Գնդեվազ գյուղի 5-րդ փողոցի N 18 հասցեում գտնվող շինությունը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2024 թվականի մարտի 5-ի N 05032024-10-0027 վկայական) Գնդեվազ գյուղի 5-րդ փողոցի N 18 հասցեում գտնվող 28,9 քառակուսի մետր մակերեսով շինությունն ուղղակի վաճառքով՝ 2330000 (երկու միլիոն երեք հարյուր երեսուն հազար) դրամով, օտարել Գագիկ Արտուշի Գրիգորյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին Գագիկ Արտուշի Գրիգորյանին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

| Կողմ -7 | Դեմ -2 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|
| ԱՐՍԵՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ | |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՆԱՆ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱԶԱՏ | |
| ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ | | |
| ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԽԻԹԱՐ | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻԿ | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ | | |
| ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ | | |

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ապրիլի 2024 թ. N 31-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 52-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկի համայնքի 2024 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից 100000-ական (հարյուր հազարական) դրամ ֆինանսական օգնություն տրամադրել Ջերմուկ համայնքի բնակիչներ Ավետիք Հակոբյանին, Գոհար Նազարյանին և Ծովիկ Շտոյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8

ԱՐՍԵՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՆԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԽԻԹԱՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱԶԱՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ

Դեմ – 1՝ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

Ձեռնպահ- 0

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. ապրիլի 23
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

23 ապրիլի 2024 թ. N 32-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի մայիսի 22-ին, ժամը՝ 15.00-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ԱՐՍԵՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՆԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱԶԱՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. ապրիլի 23
ք. Ջերմուկ